

մենից երբեմն կանգ առնելով: Արիւննին յանկարծ կը սառի. կը սարսափին յանկարծ իրենց ոտնաձայներէն, ու կը գառնան մթութեան մէջ մարդիկ գնառելու. սուր մը կախուած է իրենց գլխէն. շահի շարժուն լոյսը պատկերներով կը շլացնէ շերտեր և երբ մթութեան կը գառնան նային՝ կարծին մարդկային գէմքեր տեսնել: Ետեւներէն գեւեռու բաղմունքիւն մը կու զայ՝ մասններու ծայրին վրայ կ'ոխելով:

Առջ կ'անցնի Արտեմիոս և բանային կը խօթէ դրան մէջ. յեա քանի մը վայրկեան աչ սպասելու, շունչներին բռնած, նորէն կը դարձնեն. գուար կէս մը կը բացուի. գասաճանները ետեւնէն կը մանան կամաջուկ մը:

Կաթրը անզգայ դարձած կը նընջէր: Ազօս լոյսով՝ կը տեսնուէին բեհեզները, վարթափուռ սուկեղէն ծոպերը, վիտակները, բացին գանտնը ու սաւանով աօրին կայսրը. իջնելով մութ սանդուխներէն դիմեցին ձիարձակարանը. ընկարձակ սեղ մը, պլուլուն լոյսերով: Կայսրը ուժով ցնցում մը զգաց, յանկարծ ցուրտ մը առաւ ու աչքը բացաւ. տեսաւ խոժոռ մարդիկներ շուրջը կանգնած ջահերով. ու՝ տեսաւ գլխուն վրայ ասազալ պարզ երկինք մը .. վերջին անգամն էր որ երկինքը կը տեսնար: Երկաթներ իւր աչքերուն մէջ խրեցան ու վարդան կարոքն ցուց լոյսն ու փառքը միանգամայն: Երկրորդ օր Ս. Ստփիայի մէջ Արտեմիոսը կայսր հոչակուեցաւ: Աղետաւոր օրէն վերջը՝ բիւզանդիոյ փողոցներուն մէջէն կ'անցնէր կոյր մը՝ գաւազանը գետնին զարնելով. իւր պէմքին վրայ գազանի ու վնամ՝ ախրութիւն մը կը նշամուռէր. անցնողները կանգ կ'առնէին ու կը դիտէին. իւր շրթունքները կը թթթառային շարունակ. անէ՞ծք մ'էր որ կ'հէնէր անկից, թէ ապաշխարութեան սաղմոս մը. անցեալ կայսերութեան վրայ կը խորհէր թէ ապագայ արքայութեան մը՝ ոչ ոք զիտէր. Միայն երբ անցնէր, ամէնքը կը փրստային:

- Արարանն է, վարդանն է.
- Ո՞վ է վարդան, կը հարցնէր օտարական մը.

— Բիւզանդիոյ վարդաբ կայսրը... կը պատասխանէին:

Խաւարը որ իւր բերբերուն վրայ իջաւ, իւր մնացած կեանքը՝ կը ծածկէ մեր աչքէն:

Է. Կ. ՏԻՐ-ՍԱՀԱՆՈՍ

ՆՈՐԱԳՈՅՆ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ Ա. Տ Ր Պ Ե Տ

ԱՏՐՊԵՏ իր գարոցին աշակերտն է, գիտութեան պիտող, գեղեցկագիտութեան չհասնող:

Նոյ: Այսրնեան Գերապաժանն է իր գաստիարակը, ուսկից ներշնչուած է գրականն անբաժան մնալ և գրելը գիտութեան խոր մղել: Եւ այս պատճառաւ Արարեալի վիպակները և ողբերգութիւններն մեր միտքը գեղեցկին հրապույրին մէջ չեն օրօրի:



Արարեալ

Բայց Արարեալ իր մշակած ճիւղը — վիպասանութիւնը՝ վեհնական միարանութեան գրասեղանին չի պարտիր, այլ ինքնազարգացման և կրթական վարժարան մը վիպակներն հետ ունչութիւն մը չունի: Արարեալ իր գարոցին կը պարտի միայն ներշնչումը ինչպէս ըսինք:

Արարեալ կ'օրհատի թերթերով ծանօթացաւ. իր տաննակ վիպական հատորները զինքը նորագոյն վիպասաններու շարքին մէջ կը գնեն. իմէ Ահարոնեանին՝ գիտութիւն և Արարեալին գեղեցկագիտութիւն տրուէր, կ'ունենայինք զոչ մը մտքի գեղեցիկ վիպասաններ: Երկուքն ալ թրքահայ կեանքը կը վիպագրեն, երկուքն ալ իրենց ներկերը կը շաղուն սեւով ու արցունքով: Ահարոնեան լացընող, զգացող, յուզող և վշտացող է. իսկ Արարեալ տաղմուտով, մշակող անիրաւ իրաւունքը և ապօրէն օրէնքը պարզող ու մեկնող: Արարեալ վիպական պատմիչ է,

ինչպէս Բաֆֆի իր « Սամուէլ » ուր: Բաֆֆի մեր Հին պատմութիւնը՝ պատական հնութիւնը վիպագրեց, իսկ Ատրպետ նորը, թարմը, յորդովրդականը, գաւառականը և գեղջիկականը: Բաֆֆին ալ իր մտգական գաւազանը նորին զպցուց. միայն... կայծ հանելու նպատակով: Բաֆֆին վիպասան վարպետ է, իսկ Ատրպետ գեռ աշկերտ, ապագայ խոստացող աշկերտ մըն է, սակայն յտռաջ պիտի վարէ՝ իր վիպական մասնաճիւղը: Այս յի գիտցուի:

*

Ատրպետ Ռուսահայ գրականութեան պորշ մը կը կրէ. շեղուն, ոգին և տէր ամբողջովին Ռուսահայ է: Նոր մասնագրութեան Հեղինակ մը եթէ ունենանք, ան՝ Ատրպետը պիտի դասէ Ռուսահայ գրագէտներու գասակարգին մէջ. սակայն համակերչի հայասէր և հայազէտ Խրի վէսէլովսկի իր մէկ գրական տեսութեան մէջ՝ Ատրպետը Ռուսահայ Հին և նոր գրողներու հետ չի յիշեր. անշուշտ ո՛չ արժանիքի նայլովով, վասն զի համարժէք վիպասաններու վրայ ալ երկտող մը գրած է: Եւ սա թերեւս մոռացութեան խնդիր մըն է, որիչ ո՛չ ինչ:

Ահասարակ ներկայ գրագէտները Ռուսաստանի մէջ անծանօթ կը ծնան. և միայն իրենք իրենց երկերով կը ծանօթանան. և ասոր պատճառը այն է որ Ռուսահայ մասուր ինքնագոյութիւն չի սիրեր. կը սպասէ յորեւիտաններու և այն աստե՛ն կ'իմացուի գրչի տէր մարդուն արժանիքը և ի ցոյց կը դրուի անոր գրական գործունէութիւնը: Բարեբախտաբար յորեւիտան մը կատարուելու համար երկարաձիգ տարիներու պահանջ մը չի կայ. տասնեակ տարի մը բաւական է, և ահա գրագէտը կամ հրատարակագիրը կ'արժանանայ հասարակաց. երախտագիտական ցոյցերու և յորեւիտանի պահին զուտըր գրած կը քաշուի գրական ասպարէզէն... Սակայն փաստագրութեան զանգակը ամենուն համար շուտով չի հնչեր, որով Ռուսաստանի մէջ այժմ ունինք գրագէտներ, որոնց համբաւը լուս ու խուլ կը ձայ. այդ դժբախտներէն է Ատրպետը, որուն ամբողջ հրատարակութիւնները մեր առջեւ ունենալով, կրնանք

ամիտօք գաղափար մը կազմել իր վիպասանական մասնաճիւղին վրայ՝:

*

Գերութեան լուծին տակ հեղինակներու գրչը մոգական է. ճշմարտութիւն մըն է ըսածս, զոր տեսած եմ մեր վիճակին վիճակակից ազգաց վրայ, օրինակ կարգաճը Լեհացի հեղինակները: Մեցկէվիչ՝ որոտուով կը դիմէ, Սէնկէվիչ երգելով կը մագնիսացընէ: Լեհացին՝ տուաւ համազգային վիպասաններ, հայը գեռ ո՛չ: Սէնկէվիչն վերջը Ատրպետ մը փոփազեան մը և նոյն իսկ Ահարոնեան մը կարողալը շատ տաղտկալի է. սակայն պէտք է նկատել որ մեր վիպական գրականութիւնը գեռ օրորական է, չնականաբար քննադատութեան մեզին ալ ըստ այնմ՝ կը բանանք:

Պ. Ատրպետի տո հասարակ վիպական և թատերական ամէն հրատարակութեանց մէջ պատկերները և գոյները գեղարուեստի պահանջած ստուերը չունին. այս է պատճառը որ ընթերցողին մտքին աչքը անոր գործերուն մէջ չի գտնի սեւեռելու գեղեցիկ կեպրոն մը. քայքայ երեւակայութիւնը վտա ու հետաքրքրի՝ ուշադիր է վիպագրին. ասոր նկարագրութեանց մէջ չկայ ձանձրոյթ. պատմութեան հիւսուածքը ճարտարօրէն քանդակուած է. պարզութիւնը և բնականութիւնն է որ ընթերցողին միտքը կը ձգէ կը քաշէ իրեն: « Ժառանդներ » ի մէջ ամբողջական պարզութեամբ վրէժխնդրութեան պիտեցանական շաւիղը գծուած է. ընթերցողին հետաքրքրութիւնը նախկին զօրեղ մղումովը կ'ընթանայ. երեւակայութիւնը գեղեցիկութեանց վրայ տնտընալու առարկայ չունի: Երիտասարդ խումբը սիրտ տաղով անիրաւութեան գէմ ըմբոստացած, կը պատրաստուի, կը գործէ. գիւղի բռնակալին պարտութիւնը հրճուանքով կը դիտուի, մայրական պատուոյն համար զոհաբերութիւնը կը դրուատուի:

Ատրպետի վէպերուն հերոսները միշտ

1. Միայն Պ. Ատրպետի հրատարակութիւնները լիովին ունենալով, գրական այս տեսակ տեսութեան աւարտութիւնը կրնանք իրեն տալ. արժանիք ինչորչէ չկայ:

տառապանքի ծոցէն դուրս ցատքած են. ա-
մէնն ալ յատուկ նպատակ մը ունին, կը
նահատակուին և անոնց արիւնը փրկարար
է, սակայն կան նաեւ յուսահատութեան
նահատակներ, ասոնցմէ է վիպասանին Ար-
տաննոցի գեղջուկ «Առաքել»ը. սա Պոլ-
սոյ Շիշմանեաններու տան մէջ երկար ասին
խոհակիրութեամբ կը գիզէ 300 սակի, որ
յետոյ անանկացեալ վաճառական Տիրանին
ծուղակը կ'իյնայ. դատ կը բացուի, իրա-
ւունքը անիրաւութեամբ կը գատապարտուի,
Առաքել զինքը կործանողին դուխը կը ջախ-
ջախէ, և ինքն ալ կը ջախջախուի, գատա-
րանին բարձր յարկէն ինքզինքը վար նե-
տելով: Վէպի հանդիսները շատ պարզ են.
ատաղձը անպանոյճ. սակայն «Առաքել»ով
անթեթի ծանօթութիւն մը կ'ունենանք Հա-
յաստանէն Պոլիս գաղթող աղքատ գաւա-
ռացիին շարատանջ վիճակին վրայ: Պ. Ա-
րարպետ «Առաքել»ով ներկայացուցած է դա-
րիպին հոգեբանական պատկերը, ուր կը
տեսնենք թէ թափառական Հայաստանցին
հողէն դուրս իյնալով, ինչպէս կը հիւծի օճա-
խին, մօրը, հարսին, և գաւակներուն տա-
քուկ սիրով. և անոնց սիրուն համար ինչ
անձնանուէր զոհողութեամբ Ղարիպութեան
լուծը իր ուսն առած կը տանի: «Առաքել»ը
իր էջերուն մէջ կը պատկերէ նաեւ Պոլսոյ
Հայ աղայական կամ լուս եւս սալճնական
մեղի կեանքը իր աղտոտ գոյններով:

*

Չուս վիպականին հետ խոսնել գիտու-
թիւնը հրապուրելի և գրաւիչ բան մըն է. Պ.
Արարպետ վիպասանական այս մասնաճիւղը
ցոյց տուած է իր «Շիճոց» վէպով: Անոր
վարպետան գիւցաղին արիական անընկճելի
բմբասութիւնը, կը գովենք, կը պարտաւնը
աղքատ գիւղացիներու վաշխառու Գէորգ ա-
ղային անշնորհք ընչափրութիւնը. բայց ա-
մենէն աւելի դուռաւելի կը գտնենք գիւ-
ղատնտեսական այն ուսումը, որ «Շիճոց»ով
կ'աննդուի: Արարպետ Եւրոպական անտե-
սագիտութիւնը կը սորվեցընէ, մշակութեան
հին ու զտոսմեալ դրովիւնները ուզած է
ապալել: Սակայն «Շիճոց»ը ունի գիւ-
ղատնտեսականէն զատ ուրիշ նպատակներ

ալ: Պ. Արարպետ իր ալը վէպով շատ որոշ
ու յայտնի փայլեցուցած է Հայ գիւղացիին
ներքին տառապանքները. ցոյց տուած է թէ
Հայ աղքատը, գիւղացին իր Հայ աղաներէն
և հարուստներէն անջթօրէն կը լլկուի և շատ
պարագաներու մէջ թուրք էֆէնտիները ձեռք
կու տան տառապեալ Հայուն: Շիճոցը կ'ուզէ
յայտնել, որ աղքատ Հայ գիւղացին աւելի
օտարին սարուկը կ'ըլլայ, քան թէ իր Հայ
բնուաւորին և իր Հայ վաշխառու արիւնածուծ
աղային: Շիճոցի հերոս աղքատ վարպետանը,
յամառ իր սրողողութեան մէջ, կը մերժէ
թուլամբքը եկեղեցականին յորդորները, չու-
զեր Հայ աղային գերի ըլլալ: Վարպետան
հաստատակամ կը յայտնէ.

«Ո՛չ, ո՛չ, ես ուրախութեամբ քուրդն կը տամ,
մուկն կը տամ, թուրքին կը տամ հողերս և նրանց
սարուկ կը գառնամ, քան թէ նայի, որ փափուկ փա-
փուկ օրօրելով պիտի ծծէ արիւնս, սպականէ կեանքս:
Քուրդը, զպան կամ իւր շահի համար աւելի լուս կը
պաշտպանէ ինձ, կամ մի հարեանով կը սպաննէ և չի
տանջել բուժ, ստողի նման գանակով, »:

Սա ճշմարտութիւն մըն է, իրականութիւն
մըն է, որ շատերուն համար օտարին սուրը
պարզ սպաննող է, իսկ մերձաւորին անպոթ
բնակալ Շիճոցութիւնը անձնող ու նահա-
տակող: — «Շիճոց»ի ուրիշ մէկ նպատակն
ալ է քաղցրացընել գաղթականութեան լելի
ճակատագիրը: Ահա վաշխառուներու լուծին
ս ո՛կ ստրկացած երկու ընտանեաց զաւակ,
երիտասարդ և օրիորդ մը՝ ծնողաց ձեռքէն
խոյս տալով, օտար երկիր կը գաղթեն, կը
պօսակուրէն հնահողակ իրենց ծնողաց կամքին:
Այն նոր ընտանիքը օտարութեան մէջ եր-
ջանիկ է, իսկ Հայրենիքի մէջ այդ նորաստակ
ամուլին ծնողը յետին աստիճանի թշուառ,
կործանուած ու՛ փլած: Վիպասանը անով աբ-
ժարժեր է գաղթականութեան գոուարակըն-
ճիւղ խնդիրը: Սակայն որչափ արդարացի է
գաղթելը, այդ տակաւին անորոշ և ծանր
հարց մըն է: Առ այժմ անոր վրայ լըջօրէն
խորհելու է:

*

Պ. Արարպետ թատերագիր ալ է. բայց
ուելի վիպասանութեան մէջ յաջողած է քան

Թատերադրութեան մէջ : Էւ անյաշողութեան պատճառը կը համարինք տաղաչափական և երաժշտական օրէնքներու եկեղծարարին : Թատերադրելու ընդհանրապէս իր տաղանդը կը գոհէ երգադիր հեղինակին երեսակայական թերհնարուն : Բանանք ողբերգական կամ երգիծական « Լիպրէթթօ » ներք . երաժշտութիւն և բանաստեղծութիւն չեն զուգընթացար . հեղինակ բանաստեղծին երեսակայութիւնը մասնաւոր է երգադրին քմահաճութեան . մասնաւոր նաեւնոյ երբ թատրոնի հանդիսականք , ոչ « Լիպրէթթօ » մը կ'ուզեն , կարգալ , այլ երաժիշտ մայէստրոյին վա՛ ստեղծագործութեան կ'ուզեն ունկնդիր ըլլալ : Հրճօտիլ ոգեկախի մեղեկներու օրորներով . Թատերաբմբ « Մնամպուլան » կամ « Թուլուպորէ » ներկայացընելուն , ունկնդիր հանդիսականք կը հիստիստիկ երաժշտական խմբերգի մտպնիսական որտաէն ու ներդաշնակ շատաչէն , սակայն առանձին բանաստեղծութիւնները բնաւ ուշագրաւ չեն ըլլար . անոնք ընդհանրապէս Թատերաբմբի զուրս ինչալնուն , նման են անխօս անմտունջ արձանի մը :

Պ . Ատրպետի ողբերգութիւններն ալ « Լիպրէթթօ » յի սողեցութիւնն ունին , ե. անոնց անհրապաղը վիճակին վիճակակից : Էւ անհրապաղը են միակ յիշեալ երգական ցուցեամբ : (որինակ , կարգանք իր ամենէն ծանօթ ողբերգութիւնը « Շուշան » ը . Թատերադիրք եկեղծարկուած է երգադիր հանգուցեալ կարամուրզայի երաժշտական կանոններուն . ինքն հեղինակը անկեղծօրէն կը խոստովանի « Շուշանին » թերի ըլլալն , և կը ինզրէ երաժիշտ կարամուրզայէն որ տայ այդ ողբերգութեան իր « Բնարի լարերի քնքշիկ զայլայլիկներն , որի ներկայանակ և քաղցրանուագ եղանակները ծածկեն նոր պակասութիւններն » : Մինք կը հաւատանք , որ քնարի նուագող շարճքին մէջ ազնուացած ու գեղեցկացած է « Շուշան » ը , ինչպէս « Այսա » ողբերգութիւնը Վէրսիի յափշտակող անհամեմատ երգաստեղծ սաղանդով : Ճիշտ էր որ նախ Ատրպետ գրեր է իր « Շուշան » ը և կարամուրզայ յետոյ զայն նոթագրած է , բայց անտարակոյտ տաղաչափութիւն և բանաստեղծութիւն շատ սեղ

զիջիր են երաժշտին գեղեցիկ ինդրանքներուն : « Շուշան » ը կարամուրզայի աղաչանքով պարաստուած ողբերգութիւն մըն է , անով ոչ միպական ողբերգութիւն մը , այլ հայկական « Օրերս » մը ստեղծելու գեղեցիկ գաղափարը ունեցեր են կարամուրզայ և Ատրպետ :

Ինչ կ'արժէ այդ « օրերան » . զայն լսողները կրնան դատել , և կ'ուզեն . մենք միայն սղբերգութեան « Լիպրէթթօն » քննութեան կ'ենթարկենք : — « Շուշան » ի նիւրը գրաւիչ է : Դիւցազունէն և Խոսպի գիւղացի Սուրէնի զուտարճ Շուշան , որուն նշանածն է Միրան , քիւրտերու աւագակապետ Փուրազ Բէյ անոր ձեռքէն կը յափշտակէ Շուշանը . կը սպանուի Միրան , որուն ոգին յետոյ կ'ազատէ զՇուշան , որ առանց իր հօր ստնը դաճաւուր դատարանի մէջ մղեմանդներու հարուածներու սակ կ'իյնայ , կը մեռնի : — « Շուշան » ին մէջ չկան մեծ գովեստներու արժանի ստեղծուած նորութիւններ . կատարեալ միջ մըն է տաղաչափուած , երգի օրէնքներու մէջ սղմուած կաշկանդուած . սակայն պէտք է խոստովանիլ որ Ատրպետ ունի զգացմունք , քնքշու յուզումներ որ աւելի Միրանին կուրճքին սակ կը բարախին . Միրանին սէրը անկեղծութիւն կ'երգէ , իսկ « Շուշանին » ը ոչ այնքան վառ յուզող : Միրանի բնական այս մրմունջին ,

« Չայն զու . Թե ա . զմա . Թե ար .
 Գլ ըծայ սերտս լըսնիքում ,
 Գուցե ներեց նա սթափել ,
 Վ իշուս կարգայ ի՞մ այս երկում » :

Պատասխան մը աւելի արհեստական և բունազրօտիկ անկեղծութեամբ՝ Շուշան կուտայ .

« Միկայ կերան . կերիք տանջես ,
 Միրա ու իզիս քիչ նեմ ժաշես
 Բա . քաղցը ձայն գերեզմանից
 Մերեւ . անգամ կ'արթնացնէ ինչ » :

Մերկ է այս ստղբուն անհնականութիւնը , թէեւ Թատերադիրը մտադիր է Շուշանին խօսքերուն մէջ անխաղախ սէր լսեցընելու . Բայց Շուշան ունի արիական կտորներ .

Փոշայ Բէգի ճիրաններուն մէջ կը վիրաւորէ կը տաղէ աբբ քոնակային լեռնական կոշտ սիրարբ. Հրճուանքով կը ածանուծէ հայ կուսութեան յաղթանակը. Շուշան շքնկնիք փալազի քծնող պաղատանքէն, շքնկնիք անոր սպառնալիքներէն, համարձակ է, խելախ է. Շուշան զայրութիւնով կը հեղինէ.

« Սիրճ նորան, որի ձեռքից
Ձար կըբերի սերը զօնեց,
Որն բաժանեց իմ հոգեակից
Էս մութ բանտում բանտարկեց ինձ:
Սիրճ նորան, որի ձեռքերն
կըրակ տը ին հօրս օճախին,
Մոնք ու խոշոր ընդրն մէկտեղ
Խանձըեցին այն սեւ ծելին...
Սիրճ նորան որի ձեռքերն
Թաթախուած են եղբորս արնում,
Այ կըտրտեց մատաղ տղիբերն
Շունչ չը թողեց սեր մեծ կարմում...
Սիրճ նորան, որ չըլրերիս
Անթօթեմ տարաւ գերի,
Որին ետեցեց, որին լըզկեց,
Որն էլ փաշին կաշառք զորկեց... »

Ատրպետի ողբերգութեան ամենէն յաջող մասերը կը տեսնուին Շուշանին գերութեան արարուածին մէջ. Եւբրեքեան ներշնչումներ կան ոգեկտտ Միրանին գերին ու զէպքին մէջ. ան Տէրվիշի կերպարանքով կը մտնէ փոշայ Բէգի վրանը. Շուշանին կ'իմացրնէ թէ ինչ վարպետութեամբ և սրողայթնիրով կրնայ պրծիլ իր բռնակալին ճիրաններէն : Միրանի Ողին կ'ազդէ Շուշանին, սր կեղծէ բռնաւորին հաւատարմութիւն, ուրացութիւն, յետոյ պատաստան կը բացուի և պատարանին մէջ կ'ազատի անոր շղթաներէն : Շուշան հարսանեաց նոր գեղեցիկ զգեստներով կը զարդարուի . աւազակներու խմբին մէջ ուրախութիւնը կը տարածուի . բանակալը խելագարեց գոհ ու զուարթ է, նաժիշաներ, անոնան զարդարով կը զարպարեն կեանքուր հարբը փոշայ Բէգի մայրը կը մաղթէ.

« Երբեք, ով հարս անճաման,
Երբեք առիւծ ու կորիւն.
Թող սար ու ձաբ գըլուտի տան
Գոտ քաջ արի ձագերուն... »

Եւ ամբողջ վրանական խումբը նաժիշաներով կ'երգէ.

« Գոտի բերդից
Թնկեր մաննք,
Սարի ճաղկից
Գոյն զգին ներկենք.
Հաշխուս խալի
կարպտո գործենք
Մեր վրանի
Ձբոս զին փռենք... »

Այս չորս հինգ տողերուն մէջ հրապուրիչ է Ատրպետի գեղեցիկագիտական ճաշակը, պարզութեանը մէջ շատ բնական, թէեւ չըլայ բարձր վսեմ երեսակայութեան անոնան բան մը :


Ատրպետ կը ներկայացընէ թուրք գատարանը. ուր կը պաշտպանուի հայու մը՝ Շուշանի յափշտակուելուն պատը . թուրքը իր կրօնակից քուրդը պիտի գատապարտէ. Ղասին ինքզինքը կը հռչակէ անաչառ, օրէնքներու վրէժնիկիբ. ընթերցողը կրնայ անձուկ գաղափար մը կազմել թրքական գատարանին վրայ : Գննութեան ատեն ներկայ են, Շուշան, բռնաւոր Բէկը, իր Տէրվիշը. Տէրաւը մը, Շուշանին հայրը . պատարանին մէջ զգայուն տեսարանները կը զահալթիին : Յոյսը նախ կը ծիծաղի յետոյ նահատակութեան մէջ կը մթաղտի :

*

Մեր ամէն նշանաւոր և աննշան վիպանաններուն պէս Պ. Ատրպետ եւս իր հրատարակութիւններով ուզեր է լալ հասարակութեան ցաւը, բարեշրջել ծիւրած գաղափարները, ներդրածել մեռած տարրին վրայ, հրակիզել ու յուզել տաք արիւնները, գծել յոյսին ճամբաները, գտնէլ առանց երեսակայելու թէ զէպ ի ուր կը յանդին անոնց ծայրերը. ուզեր է մղում մը տալ նոր կենսութիւն, առանց գիտնալու թէ ուր կրնայ իյնալ մղուածը. Բաֆֆին ալ ապագային ծրագիրը տուաւ և եղաւ ամենէն հեղինակաւոր ծրագրողը . բայց համակ համակրութիւն մը ըլլալով հանդերձ, իր ծրագիրն ալ քննադատուեցաւ : Սակայն ինչպէս ամէն երգիչ, այսպէս ամէն ալ վիպագիր սթափեցընող, զոլող և յուզող են, անոնցմէ չի պահանջուիր ապագայի պատասխանատուութիւնը . անոնք կը վառեն զմեզ կը վառուինք, կը յուզեն զմեզ կը յուզուինք . և այսքան միայն : Բայց

Ատրպետ, միպասանական գործին սկզբնաւորութեան մէջն է տակաւին: Ուշ ծագեցաւ և շուտով քաշուեցաւ, ամփոփուեցաւ լուսթեան չէզոք վիճակի մէջ: Գիտութեան այն մասնաճիւղը զոր սիրած է և մշակած, անոր թող հազցրնէ վէպին երեւակայութեան զարգարուն, և ոսկեհիւս պատմունճանը, ազգեցութիւնը կ'ըլլայ գրուել և մոգիչ, ինչպէս է և հոշակուած է մեղուներու կեանքը միպագրող Մեթեռլինկը, որ այժմ համազգային տաղանդ մըն է: Եւրոպացի նորագոյն միպասաններէն կի տը Մորասան ունեցաւ բաւական հայ աշակերտներ, ջիշ մըն ալ Մեթեռլինկ թող մարտապետէ, սակայն առանց արատաւորելու հայկական կոյտ ուղեղը:

Հ. Ս. ՆՐԵՄ.



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՊԻԹԻՒՆ

Փ Ա Ւ Ս Տ Ո Ս Բ Ո Ւ Ջ Ա Ն Դ

Մե'ղ.Ք. մեր ազգին համար խուզանդ շատ շուտ աշխարհք եկաւ: Այս դարուս մէջ պէտք էր ծնանիլ որպէս զի մենք ունենայինք մեծ միպասանը և մեծ թատերագիրը. հակառակորդ մը Հիւկոյի և Շէքսպիրի: Նոյն բնաւորութիւն, նոյն խառնուածք, նոյն ճաշակ, — երկինքը ամէն բան բոնալիւր շնորհած էր իրեն, բայ ի ժամանակէն: Նա չորրորդ դարուն ծնաւ ու հարկաւորապէս պատմիլ մ'եղաւ: Միայն պատմաբան ըլլալու արամապրութիւնքը չունէր:

Պատմիչը հանպարտ պէտք է ըլլայ. ինք կրակուրոց է: Միշտ չէզոք. ինք բաներ կան՝ զորս գրութեամբ կը սիրէ, բաներ ալ կան՝ զորս գրութեամբ կ'ատէ. որոշ կուսակցութեան մը անձն է: Պատմիչը պէտք չէ անձնաւորութեանց առանձնական կեանքը թրթրէ, կեանքը զոր կը վարեն իրենց սան մէջ, իրենց գրացոյն հետ ինչպէս միւս հազարաւոր քաղաքացիներն, աւելի աննշան: Այլ ալ կրնայ լնել, բայց այնչափ միայն՝ որչափ որ պէտք է իր ընդհանուր ծրագրին

միայ լոյս մը սփռելու: Բուզանդ այսպէս չէ, հակամէտ է միշտ առանձնական կեանքնկարագրելու, խաւարի մէջ գործուածները մերկացնելու: Նա Հայոց պատմութիւնը չգրեր, իւրաքանչիւր անձի պատմութիւնը կը գրէ: Ինչ որ տիեզերական պատմութիւնը չնահագրոր, անիկայ ազգային կեանքին կը վերաբերի բայց ոչ ազգային պատմութեան: Բուզանդ առանին, հետաքրքրաշարժ տեսաւորաններու բով մ'է. մարդս անհամբեր ու հրճուալից իրեն մտիկ կ'ընէ, վասն զի բամբասել է չպարտի:

Այս գծով Պլուտարքոսի կը նմանի. սակայ իր անձնաւորութեանց բոլոր հոգին խօսքի մը, մանրավէպի մը մէջ կը ծրարէ: Նա մեզ վասակը, Արշակի սպարապետը շատ դիրքով նկարեր է. բայց այլ կարճակ հսկայն միշտ մաքիլ առջեւ կու գայ ոտներէն իւրաքանչիւրը լերան մը գլուխը դրած՝ զորս ուզած ատենը կը հարթյալաւի, — ու յետոյ, յարկալից տիկ մը, կախուած ճիշդ հանդէպ շղթայակապ Արշակին՝ զոր միայն սիրած էր:

Բուզանդ չորրորդ դարու հայկական կեանքը վէպի մը շնորհքներով ու թատերախաղի մը աշխուժիւր կը ներկայացնէ: Չորրորդ դարու հայկական կեանքը իր շրջապատն եղած է. ինքն ալ նոյն կեանքի թարգմանն է. երկուքն ալ իրարու ներշնչած են, երկուքն ալ լաւ ճանչնալու համար պէտք է ի միասին ճանչնալ:

Մոմըն Հայաստանի համար կ'ըսէ թէ միշտ անյունացեալ երկիր մը մնաց, երկար ատեն հոռմէական պետութեան տակն ըլլալով հանդերձ: Չարմանալի երեւոյթ: Մեր ազգը որ այնքան պատրաստ է իր լեզուէն, իր բարբերէն մերկանալու, որպէս զի օտարինը ընդգրկէ, միայն արեւմուտքի պիտոց կը յամառի: Աս կը նշանակէ որ մենք արեւելեան ժողովուրդներու նիւթերով մինչեւ հոգւոյն խորքը զմտուած ենք: Եւ իրաւ յնէ ի՞նչ մենք մեր լեզուն, մեր բարբերութիւնը ենք՝ միշտ արեւելեան մը առնելու համար է: Աղեքսանդր, Հուսամյացիները քաղաքակրթութեան նոր հոսանքներ, գեղեցկի նոր ճաշակներ տարածեցին բոլոր Արեւելքի մէջ, զորս Փոքր Ասիոյ պղտի ազգերն աւ-